

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության  
2010 թվականի գործունեության մասին

## 1. Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառում պետական քաղաքականության

Առաջնորդվելով ոլորտին վերաբերող օրենսդրական և այլ ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև ԼՂՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 931 որոշմամբ հաստատված ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կանոնադրության 9-րդ կետի 1-ին , հիմնավորվել և ԼՂՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել հետևյալ 13 որոշման նախագծերը.

- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 833-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը
- «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը անհատույց գործափայտ հատկացնելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2010 թվականին պետական բյուջեով նախատեսված անտառային միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2010 թվականին պետական բյուջեով նախատեսված գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը անհատույց գործափայտ հատկացնելու մասին» որոշման նախագիծը
- ««Էյ Թի Էյ Վանք Լես» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց գործափայտ հատկացնելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը անհատույց վառելիքափայտ և գործափայտ հատկացնելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի մարտի 18-ի թիվ 235 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը
- «Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» որոշման նախագիծը
- «Գիշատիչների թվաքանակի կարգավորման և միջոցառումների անցկացման մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 833-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 14-ի թիվ 246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 14-ի թիվ 247-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը:

Նշված որոշման նախագծերը ընդունվել են ԼՂՀ կառավարության կողմից:

## 2. Բնական ռեսուրսների կառավարում

Բնական ռեսուրսների կառավարման գործառնությունը, համաձայն ԼՂՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 23-ի թիվ 932 որոշմամբ հաստատված կանոնադրության, իրականացնում է վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալությունը (ընդհանուր հաստիքների քանակը՝ 4):

### 1. Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտ

Տնտեսվարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված 41 հայտերի հիման վրա, Ջրային օրենսգրքի պահանջներին համաձայն ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման նպատակով, տեղում ուսումնասիրվել է 31 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել ջրօգտագործման թույլտվություններ, այդ թվում՝ 2-ը Ստեփանակերտում, 4-ը Մարտակերտի, 17-ը Ասկերանի, 5-ը Մարտունու, 1-ը Տաթևի, 1-ը Քաջաթաղի և 1-ը Շահումյանի շրջաններում: Բացի այդ, օրենքով սահմանված կարգով ներկայացվել են նախկինում տրամադրված 9 ջրօգտագործման թույլտվություններ:

Մնացած 10-ը հայտերի հիման վրա անհրաժեշտություն է առաջացել տեղում կատարելու լրացուցիչ ուսումնասիրություններ, որոնք նախատեսվում են կատարել 2011 թվականին:

Ընդամենը՝ 2010 թվականին տրամադրվել է 31 ջրօգտագործման թույլտվություն: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն պետքություն է մուտքագրվել 310,0 հազ. դրամ:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 1.1).

Աղյուսակ 1.1

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում				2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		Կատարվել են		վճարվել է քույզն		Կատարվել են		վճարվել է քույզն	
		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր	Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում	հատ	31	դրամ	310.0	հատ	17	դրամ	170.0
2	Ջրօգտագործման թույլտվությունների ներկարծում	– ” –	9	– ” –	-	– ” –	5	– ” –	-
	<b>Ընդամենը՝ մուտքագրվել է պետքություն</b>	<b>X</b>	<b>x</b>	<b>դրամ</b>	<b>310.0</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>դրամ</b>	<b>170.0</b>

Աղյուսակ 1.1-ից հետևում է, որ 2010 թվականին ջրօգտագործման թույլտվությունների քանակը 2009 թվականի համեմատ ավելացել է 14-ով, ներկարծումների քանակը՝ 4-ով, իսկ պետական տուրքի մասով մուտքագրումները պետքություն 2009 թ. համեմատ ավելացել են 140,0 հազ. դրամով:

### 2. Կենսառեսուրսների կառավարման ոլորտ

**Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման և նրիտասարդացման թույլտվությունների տրամադրում**

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմների, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի

երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 34 հայտերի հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ և համապատասխան քննարկումների արդյունքում տրամադրվել 27 գրավոր համաձայնություն: Օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով 7 հայտ մերժվել է:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 2.1).

Աղյուսակ 2.1

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում			2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		Կատարվել են		Մերժվ.	Կատարվել են		Մերժվ.	
		Չափի միավոր	Քանակը	Քանակը, (հայտ)	Չափի միավոր	Քանակը	Քանակը, (հայտ)	
1	Ծառահատման թույլտվությունների տրամադրում	Ընդամենը	հատ	27	x	հատ	31	x
2	Ծառերի երիտասարդացման թույլտվությունների տրամադրում							
3	Ծառահատումների մերժումներ	x	x	7	x	x	2	

Աղյուսակ 2.1-ից հետևում է, որ 2010 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը 2009 թվականի համեմատ նվազել է 4-ով, իսկ մերժումների քանակը ավելացել է 5-ով:

**Անտառանյութի հատկացման և մթերման գործընթացը**

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2010թ. համար հաստատված 5795 խ.մ. գործափայտի և 41965 խ.մ. (կամ 60010 դ.խ.մ.) վառելիափայտի մթերման համար տնտեսվարող սուբյեկտների կողմից անտառօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով քննարկվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմում-գրություններ, որոնց համաձայն մթերվել և իրացվել են 3337 խ.մ. գործափայտ և 61970 դ.խ.մ. վառելիափայտ:

2010թ. ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից մթերված գործափայտի դիմաց պետքայուջն է մուտքագրվել 42726,0 հազ. դրամ, իսկ վառելիափայտի դիմաց՝ 85398,4 հազ. դրամ: Բացի այդ, այլ անտառանյութերի օգտագործումից մուտքագրվել է նաև 1669,1 հազ. դրամ: Նախորդ տարիների դեբիտորական պարտքերից մուծվել է 924,5 հազ. դրամ: Ընդամենը՝ պետքայուջն է մուտքագրվել 130 717,4 հազ. դրամ:

Դեբիտորական պարտքերը 01.01.2011թ. դրությամբ կազմում են 11035,4 հազ. դրամ, այդ թվում՝ գործափայտից՝ 9625,0 հազ. դրամ, վառելիափայտից՝ 1269,2 հազ. դրամ:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 2.2).

Աղյուսակ 2.2

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում						2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		ԼՂՀ կառ. որոշմամբ հաստատված, մ <sup>3</sup>	Մթերվել են		Վճարվել է բյուջն		ԼՂՀ կառ. որոշմամբ հաստատված, մ <sup>3</sup>	Մթերվել են		Վճարվել է բյուջն	
			Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Տրամադրված թույլտվությունների հիման վրա գործափայտի մթերում	5795	մ <sup>3</sup>	3337	դրամ	42726,0	5980	մ <sup>3</sup>	2346	դրամ	48213,0

2	Տրամադրված թույլտվությունների հիման վրա վառելիքայտի մթերում	60010	– ” –	61970	– ” –	85398,4	50000	– ” –	55748	– ” –	6238,0
3	Տրամադրված թույլտվությունների հիման վրա անտառանյութի այլ տեսակների մթերում		– ” –			1669,1					-
<b>Ընդամենը՝ մուտքագրվել է պետություն</b>		<b>x</b>	<b>X</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>130717,4</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>54451.0</b>

Աղյուսակ 2.2-ից հետևում է, որ 2010 թվականին տրամադրված և մթերված թգործափայտի ծավալը 2009 թվականի համեմատ ավելացել է 997,0 խ.մ.-ով, իսկ վառելիքայտի մթերման և իրացման ծավալը ավելացել է 6222 դ.խ.մ.-ով:

2010 թվականին մթերված և իրացված գործափայտի և վառելիքայտի դիմաց պետություն մուտքագրված գումարը 2009 թվականի համեմատ ավելացել է 12430,0 հազ. դրամով, իսկ դեպիտորական պարտքերի 11035,5 հազ. դրամ գանձման դեպքում 23465,5 հազ. դրամ:

**«2010 թ. անտառային միջոցառումների ծրագրի» համաձայն անտառային ֆոնդի բնական աճի աջակցման համար «Արգախանտառ» ՊՈԱԿ-ի կողմից 2010թ. կատարված աշխատանքների վերաբերյալ**

Վարչության պետի 2010 թ. նոյեմբերի 30-ի թիվ 1.5-6/818 հանձնարարականի համաձայն՝ 2010 թ. դեկտեմբեր ամսում կատարվել են «2010 թ. անտառային միջոցառումների ծրագրով» նախատեսված անտառային ֆոնդի բնական աճի աջակցման փաստացի կատարված աշխատանքների և «Արգախանտառ» ՊՈԱԿ - ի կողմից ներկայացված կատարողական ակտերի արժանահավատության ստուգումներ:

Համաձայն ծրագրի նախատեսվել է իրականացնել բնական աճի աջակցման աշխատանքներ 400 հա տարածության վրա:

Ստուգվող ընտրովի տեղամասերում անտառային ֆոնդի բնական աճի աջակցման աշխատանքներում թերացում է արձանագրվել միայն Մարտակերտի մասնաճյուղի Չլդրանի անտառապետության 20 հա մակերեսով տեղամասում, որտեղ աշխատանքներ չեն կատարվել:

**«2010 թ. անտառային միջոցառումների ծրագրի» համաձայն «Արգախանտառ» ՊՈԱԿ-ի կողմից 2008 և 2009 թթ. իրականացված ընկուզենու տունկի խնամքի աշխատանքների վերաբերյալ**

Վարչության պետի 2010 թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1.5-6/845 լրացուցիչ հանձնարարականի համաձայն 2010 թ. դեկտեմբեր ամսում կատարվել են «2010 թ. անտառային միջոցառումների ծրագրով» նախատեսված և 2008-2009 թթ. իրականացված ընկուզենու տունկի խնամքի համար 2010թ. IV եռամսյակում «Արգախանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կատարված և ներկայացված կատարողական ակտերի արժանահավատության ստուգումներ 11,2 հա տարածության վրա:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ ստուգվող ընտրովի տեղամասերում 2008 և 2009 թթ. իրականացված ընկուզենու տունկի խնամքի համար 2010 թ. IV եռամսյակում կատարվել են համապատասխան աշխատանքներ, բացառությամբ Քաշաթաղի մասնաճյուղի 0.8 հա և

Ստեփանակերտի մասնաճյուղի Բալուջայի անտառափնտրության 1,0 հա մակերեսներով տնդամասերից, որտեղ երաշտի պատճառով տնկիները չորացել են:

**Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների օգտագործման նպատակով սիրողական և արդյունագործական որսի թույլտվությունների տրամադրման վերաբերյալ**

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում հայտատուներին տրամադրվել է 77 թույլտվություն, այդ թվում՝ 68-ը վայրի կենդանիների որսի, 6-ը՝ ցանցով ձկնորսություն իրականացնելու և 3-ը՝ թարփով ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետքայուջն է մուտքագրվել 254,4 հազ. դրամ:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 2.3).

Աղյուսակ 2.3

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում				2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		Կատարվել են		Վճարվել է բյուջե		Կատարվել են		Վճարվել է բյուջե	
		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր	Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Որսի օբյեկտ հանդիսացող որոշ վայրի կենդանատեսակների որսի թույլտվությունների տրամադրում	հատ	68	դրամ	165,9	հատ	114	դրամ	245,5
2	Ցանցով ձկնորսություն իրականացնելու թույլտվությունների տրամադրում	կգ	1950	– ” –	58,5	– ” –	4	– ” –	30,0
3	Թարփով ձկնորսություն իրականացնելու թույլտվությունների տրամադրում	կգ	700	– ” –	21,0	– ” –	5	– ” –	54,0
<b>Ընդամենը՝ մուտքագրվել է պետքայուջն</b>		<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>245,4</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>329,5</b>

Աղյուսակ 2.3-ից հետևում է, որ 2010 թվականին որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների օգտագործման նպատակով սիրողական և արդյունագործական որսի համար տրամադրված թույլտվությունների ընդհանուր քանակը 2009 թվականի համեմատ նվազել է 46-ով, իսկ որսի դիմաց մուտքագրումները պետքայուջն՝ 84.1 հազ. դրամով: Գումարների նվազումը պայմանավորված է որսաշրջանի ուշ բացմամբ և որոշ կենդանատեսակների որսի արգելմամբ:

**Բնության հատուկ պահպանվող տարածքների բաղկացուցիչ մասը կազմող բնության հուշարձանների ցուցակագրման վերաբերյալ**

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, ԼՂՀ տարածքի բնության հուշարձանների ցուցակագրման նպատակով՝ 2009 թվականին և նախորդ տարիներին ԼՂՀ շրջվարչակազմների և համայնքների ղեկավարների, տարբեր կազմակերպությունների աջակցությամբ ու տեղում կատարված դիտարկումների արդյունքում

արձանագրված ավելի քան 300 անուն բնության հուշարձանների ցանկը բազմիցս վերանայվել է, քննարկվել և ըստ նշանակության դասակարգվել համապատասխան խմբերի: Արդյունքում առանձնացվել են 140 անուն գիտական, բնապատմական և գեղագիտական արժեք ներկայացնող բնական օբյեկտներ:

Նախատեսված է 2011 թ. ցանկը ներկայացնել ԼՂՀ կառավարության քննարկմանը:

### 3. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտ

1. ԼՂՀ կառավարության 2010 թ. մարտի 31-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 141 Ն որոշման 3-րդ և 6-րդ կետերի համաձայն 2010թ. ապրիլ ամսին կատարվել է վարչությունում առկա ընդերքօգտագործման ոլորտին վերաբերվող աշխատանքային փաստաթղթերի նրկրորդ փուլի հանձնումը ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարությանը:

2. Օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակ հետապնդող իրավաբանական անձանց դիմումների համաձայն՝ նախքան լիազոր մարմնի կողմից լիցենզիա ստանալը, նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարվել են 6 ուսումնասիրություններ:

Բոլոր ուսումնասիրությունների արդյունքում տրամադրվել են համապատասխան գրավոր համաձայնություններ՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու պայմանով, որոնք տարվա ընթացքում իրականացվել են:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 3.2).

Աղյուսակ 3.2

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում		2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում	
		կատարվել են		կատարվել են	
		Չափի միավոր	Քանակը	Չափի միավոր	Քանակը
1	Ընդերքի տեղամասերի ուսումնասիրությունների կատարում՝ նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից նախնական համաձայնություններ տրամադրելու համար	հատ	7	հատ	6

Աղյուսակ 3.2-ից հետևում է, որ 2010 թվականին օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակով, իրավաբանական անձանց դիմումների համաձայն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարված ուսումնասիրությունների հիման վրա տրամադրված համաձայնությունների քանակը 2009 թվականի համեմատ ավելացել է 1-ով:

Այս գործառնությունների համար մուտքագրումներ պետքությոջն կատարվում են բնապահպանական պետական փորձաքննության իրականացման պայմանագիրը կնքելուց հետո:

### 4. Հողերի կառավարման ոլորտում

ԼՂՀ տարբեր շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով, նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից ԼՂՀ տարբեր շրջաններում տեղում կատարվել են 47 հողատարածքների

ուսումնասիրություններ, որոնցից 5-ը օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով հետ են ուղարկվել լրամշակման:

Ուսումնասիրությունների արդյունքում տրամադրվել են հողատնաքերի փոփոխման 42 համապատասխան գրավոր համաձայնություններ՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու պայմանով, որոնք սահմանված կարգով իրականացվել են:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 4.1).

Աղյուսակ 4.1

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում		2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում	
		կատարվել են		կատարվել են	
		Չափի միավոր	Քանակը	Չափի միավոր	Քանակը
1	Հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով տեղում ուսումնասիրությունների կատարում՝ նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից նախնական համաձայնություններ տրամադրելու համար	հատ	42	հատ	132

Աղյուսակ 4.1-ից հետևում է, որ 2010 թվականին հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով ԼՂՀ տարբեր շրջանների վարչակազմների և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարված ուսումնասիրությունների հիման վրա տրամադրված համաձայնությունների քանակը 2009 թվականի համեմատ պակասել է 90-ով:

Այս գործառնությունների համար մուտքագրումներ պետք է կատարվում են բնապահպանական պետական փորձաքննության իրականացման պայմանագիրը կնքելուց հետո:

**5. Բնապահպանական պետական փորձաքննության ոլորտ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվել է 87 հայտ, որոնցից փորձաքննության են ենթարկվել 57-ը, իսկ 30-ը գտնվում է ընթացքի մեջ:

Ընդամենը բնապահպանական պետական փորձաքննության իրականացման համար պետական բյուջե է մուտքագրվել 7321,4 հազ. դրամ:

2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2009 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ 5.1).

Աղյուսակ 5.1

N	Աշխատանքների անվանումը	2010 թ. ընթացքում				2009 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		Իրականացվել են		վճարվել է բյուջե		Իրականացվել են		վճարվել է բյուջե	
		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր	Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
	Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը					Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը			

1	Ներկայացվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	87	x	x	x	x	6	x	x	x	x
2	Կնքվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու պայմանագիր	87	հատ	x	դրամ	x	6	հատ	-	դրամ	-
3	Իրականացվել է բնապահպանական պետական փորձաքննություն	x	հատ	57	դրամ	7321.4	x	հատ	2	դրամ	180.3
<b>Ընդամենը՝ մուտքագրվել է պետություն</b>		<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>դրամ</b>	<b>7321.4</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>դրամ</b>	<b>180.3</b>

Աղյուսակ 5.1-ից հետևում է, որ 2010 թվականին բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի քանակը 2009 թվականի համեմատ ավելացել է 81-ով, իսկ իրականացված փորձաքննությունների քանակը՝ 55-ով: 2010 թվականին իրականացված փորձաքննությունների դիմաց մուտքագրումները պետություն 2009 թվականի համեմատ ավելացել են 7141.1 հազ. դրամով:

## 6. Բնապահպանական վերահսկողություն

ԼՂՏ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնապահպանական պետական տնտեսությունը, ղեկավարվելով ոլորտին վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, իր կանոնադրության և գործունեության ծրագրի համաձայն, 2010թ. ժամանակաշրջանում իրականացրել է հետևյալ գործառույթները՝

### 1. Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում

Ապօրինի ծառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 24 իրավախախտում, որոնք կատարվել են 25 քաղաքացիների կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ, օրենսգրքի 65 և 66 հոդվածների համաձայն, վարչական պատասխանատվության ենթարկվել են 2 քաղաքացի, տուգանքի չափը կազմել է 100,0 հազ. դրամ: Գործի վերաբերյալ նյութերը ուղարկվել են դատարան:

Կազմված 24 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմում է 58004,2 հազ. դրամ: Հաշվարկված վնասի չափից պետություն է մուծվել 1054,0 հազ. դրամ:

ԼՂՏ ոստիկանություն է ուղարկվել 23 վարույթ՝ 56950,2 հազ. դրամի չափով ընթացքավորելու նպատակով: Դատարան է ուղարկվել 1 գործ՝ 459,0 հազ. դրամի չափով:

Անօրեն որսորդության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 4 իրավախախտման դեպք, որոնք կատարվել են 5 քաղաքացու կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 88-րդ հոդվածով 3 քաղաքացի ենթարկվել են վարչական պատասխանատվության: Տուգանքի չափը կազմել է 110,0 հազ. դրամ, որը կամավոր մուծվել է պետություն:

Կազմված 4 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 10283,0 հազ. դրամ: Կամավոր պետություն է մուծվել 283,0 հազ. դրամ:



ԼՂՀ ոստիկանություն ուղղարկված 1000,0 հազ. դրամ վնասի չափի մասով քրեական գործի հարուցումը 14.04.2010թ. ԼՂՀ ոստիկանության Հաղորդի շրջաժամի կողմից մերժվել է:

Առգրավված որսամթերքները՝  
աղավնի-3  
նապաստակ-2  
այծյամ-1

Անօրեն ձկնորսության փաստով հայտնաբերվել է 4 իրավախախտում, որոնք կատարվել են 4 քաղաքացիների կողմից: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 89-րդ հոդվածով 1 քաղաքացի տուգանվել է 50 հազ. դրամի չափով, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

Կազմված 4 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 327,0 հազ. դրամ: ԼՂՀ ոստիկանություն են ուղղարկվել 2 գործի վերաբերյալ նյութեր ընթացքավորելու նպատակով:

## **2. *Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում***

Ապօրինի ջրօգտագործման փաստով կատարվել է 11 ստուգում: Ստուգման ընթացքում իրավախախտում չի հայտնաբերվել:

## **3. *Բնապահպանական պետական փորձաքննության ոլորտում***

Բնապահպանական պետական փորձաքննություն չիրականացնելու փաստով չորս տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության են ենթարկվել 3 կազմակերպությունների պաշտոնատար անձինք: Տուգանքի չափը կազմել է 250,0 հազ. դրամ: Կամավոր մուծվել է 200,0 հազ. դրամ, իսկ 50,0 հազ. դրամի մուծումը ընթացքի մեջ է:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն 17 կազմակերպությունների պաշտոնատար անձանց տրվել է նախազգուշացում բնապահպանական պետական փորձաքննություն չիրականացնելու համար:

## **4. *Բնապահպանական և բնօգտագործման վճարների ոլորտում***

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների ճշգրտման նպատակով 2010 թվականին ստուգվել են ԼՂՀ տարածքում գործող 29 հիմնարկ-ձեռնարկություններ: Ստուգումների ընթացքում 5 կազմակերպության նկատմամբ կազմվել է օրենսդրության իրավախախտման արձանագրություն: Կազմված 5 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 160,872 հազ. դրամ, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

Վարչական տուգանքի չափը կազմել է 150,0 հազ. դրամ, որից 100,0 հազ. դրամ մուծվել է պետբյուջե, իսկ 50,0 հազ. դրամի գանձումը ընթացքի մեջ է:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 24 տնտեսվարող սուբյեկտների տրվել է նախազգուշացում 4288,328 հազ. դրամ պակագ մուծված բնապահպանական և բնօգտագործման վճարների համար: Նշված գումարը մուծվել է պետբյուջե:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություն են ներկայացրել 70 հիմնարկ-ձեռնարկություններ: Հաշվարկված բնավճարները կազմել են 32400,0 հազ. դրամ, այդ թվում՝

բնապահպանական վճարներ՝ 7102,0 հազ. դրամ  
բնօգտագործման վճարները՝ 25298,0 հազ. դրամ

**5. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում**

Ապօրինի ընդերքօգտագործման փաստով արձանագրվել է 2 իրավախախտման դեպք, որոնք կատարվել են 2 կազմակերպությունների կողմից: Հաշվարկված վնասի չափը կազմել է 203,05 հազ. դրամ, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 60' և 169' հոդվածներով կազմակերպության պաշտոնատար անձինք ենթարկվել են տուգանքի 250,0 հազ. դրամի չափով: Նշված գումարը կամավոր մուծվել է պետբյուջե:

**6. Վտանգավոր նյութերի արտադրության ու սպառման թափոնների ոլորտում**

Արտադրական և սպառման թափոնների ստուգում է իրականացվել Շուշիի «Բարեկարգում» ՓԲԸ-ում: Արտադրական և սպառման թափոնները ընկերությունը տեղափոխում և տեղադրում է Ստեփանակերտի աղբաթափման տեղամաս:

**7. Բնապահպանական վարչական վիճագրության ոլորտում**

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված վիճակագրության հաշվետվության ձևերի կիսամյակային և տարեկան համապատասխան հաշվետվությունները սահմանված ժամկետներում ներկայացվել են ԼՂՀ Ազգային վիճակագրության ծառայություն:

**8. Հրդեհների կանխման, մեկուսացման և մարման միջոցառումների իրականացում**

Բնապահպանական պետական տեսչությունը շահագրգիռ կազմակերպությունների հետ միասին մասնակցել է 2010թ. տեղի ունեցած լանդշաֆտային հրդեհների մարման աշխատանքներին: Լանդշաֆտային լայնամասշտաբ հրդեհները տեղի են ունեցել 30793 հա տարածության վրա, այդ թվում՝ 8061 հա պետական անտառային տարածքում և 29992 հա արտավայր, խոտհարք և վարելահող: Կազմվել է 18 արձանագրություն:

Հրդեհների հետևանքով այրվել է 957,05 խ.մ. փայտանյութ, հիմնականում թափուկ: Հաշվարկված վնասի չափը կազմել է 620,42 հազ. դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն մեկ քաղաքացի ենթարկվել է վարչական պատասխանատվության, տուգանվել է 80,0 հազ. դրամ:

**9. Գիշատիչների գլխաքանակի կարգավորում**

Հաշվետու 2010թ. որսորդների և քաղաքացիների կողմից ոչնչացվել է 179 գլուխ գայլ և 265 գլուխ շնագայլ, այդ թվում՝

ք. Ստեփանակերտ	գայլ-35	շնագայլ- 60
Ասկերանի շրջան	գայլ -29	շնագայլ - 34
Մարտակերտի շրջան	գայլ 43	շնագայլ - 40
Մարտունու շրջան	գայլ 27	շնագայլ – 48
Հադրութի շրջան	գայլ 15	շնագայլ – 33
Շուշիի շրջան	գայլ 4	շնագայլ – 20
Քաշաթաղի շրջան	գայլ 14	շնագայլ - 30
Շահումյանի շրջան	գայլ 12	

**4. Հաշվետու ժամանակաշրջանում ստացած գրությունների և դիմումների վերաբերյալ**

Ընդամենը վարչությունում հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրած ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից գրանցվել է 204 դիմում-գրություն, որից բավարարվել է 177-ը, 10 դիմում-գրություն ընթացքավորման մեջ է, 16-ի թղթերը թերի են ներկայացվել, իսկ 1 հայտ ներկայացվել է տարվա ընթացքում:

## Ամփոփում

### *1. Բնական ռեսուրսների կառավարման ոլորտում*

Ընդամենը բնական ռեսուրսների կառավարման ոլորտում իրականացված գործունեությունից 2010 թվականի ընթացքում պետբյուջե է մուտքագրվել 130717,4 հազ. դրամ, որը 2009թ. մուտքագրված 113062,8 հազ. դրամից ավելի է 17654,6 հազ. դրամով, կամ 2010թ. ընթացքում կատարված մուտքագրումները 14 տոկոսով բարձր են 2009թ. ընթացքում կատարված մուտքագրումներից:

Բացի մուտքագրված 130717,4 հազ. դրամ գումարից նախատեսվում է դեբիտորական պարտքերի հաշվին պետբյուջե մուտքագրել ևս 11035,4 հազ. դրամ:

### *3. Բնագահպանական վերահսկողության ոլորտում*

Կատարված աշխատանքների ամփոփումից հետևում է՝

1. 2010թ. ստուգումների քանակը 2009թ. համեմատ ավելացել է 3,5 անգամ
2. 2010թ. հայտնաբերված իրավախախտումների քանակը 2009թ. համեմատ ավելացել է 1,5 անգամ
3. 2010թ. վարչական տուգանքի գումարի չափը 2009թ. համեմատ ավելացել է 130,0 հազ. դրամով:
4. 2010թ. հաշվարկված վնասի չափը 2009թ. համեմատ ավելացել է 38540,0 հազ. դրամով կամ 2 անգամ:
5. Համեմատ 2009թ. հաշվարկված բնավճարները ավելացել են 7,813,55 հազ. դրամով (2009թ. բնավճարները կազմել են 24,586,45 հազ. դրամ), աճը կազմում է 31,78 տոկոս: